ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «2019-2021 թվականների ժամանակահատվածի կարիքների համար Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրում 201 9 թվականի դեկտեմբերի 4-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:
Փոփոխության նկարագրություն՝	Աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով,
Փոփոխության պատճառ՝	Պայմանագրի 5.1 կետը լրացնել նոր 5.1.1 ենթակետով:
Փոփոխության նկարագրություն՝	«5.1.1. 2019թվականի համար նախատեսված Պայմանագրի գնի մինչև 25 տոկոսը 28 093 939 (քսանութ միլիոն իննսուներեք հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի ստացման համար Կապալառուն 15 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2019 թվականի համար նախատեսված Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 և 8.6 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«02» սեպտեմբերի 2019թ. N ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01 պայմանագրի

ք.Երևան «04» «12» 2019թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Հարությունյան Շին» ՍՊԸ-ն, Ընկերության տնօրեն Վ.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կապալառու», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կողմերի միջև կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01» ծածկագրի պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1.1. աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով,

1.2. Կողմերը որոշեցին 2019 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված «ՇՄՆ-ԲՄ-ԱՇՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրի 5.1 կետը լրացնել նոր ենթակետով՝

1.2.1. «5.1.1. 2019 թվականի համար նախատեսված Պայմանագրի գնի մինչև 25 տոկոսը 28 093 939 (քսանութ միլիոն իննսուներեք հազար ինը հարյուր երեսունինը) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի ստացման համար Կապալառուն 15 աշխատանքային օր վա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, բանկային երաշխիքի ձևով:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2019 թվականի համար նախատեսված Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Հարությունյան Շին» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Գերցենի 9
ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011007763	ՀՀ 2470103800010000
ՀԿՀՀ 02507198	ՀԿՀՀ 01012067
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ	«Հարությունյան Շին» ՍՊԸ-ի տնօրեն
Վ.Ջիլավյան	**Վ.Հարությունյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**